ՀՀԿԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

6 ապրիլ, 2021 թվականի № 27-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի № 3-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 46-րդ հոդվածներով և 67-րդ հոդվածի 1-ին մասի Է) կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1964-Ա որոշման 1-ին կետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան պայմանագիրը օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ կնքել ի սկզբանե սահմանված ժամկետում, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի հունվարի 13-ի № 3-Լ որոշման 3-րդ կետում «եռամսյա» բառը փոխարինել «ութամսյա» բառով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

6 ապրիլ, 2021 թվականի

ք. Երևան